



**St. Mary's Armenian Apostolic Church**  
**42ND AND FESSENDEN STREETS, N. W.**  
**WASHINGTON, D. C. 20016**



Bishop Papken Varjabedian  
 Pastor.  
 Tel: Church & Home 363-1923

*First Christian Nation.*  
*Still Serving Christ.*

**ՀՈՎՈՒԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**  
**1971-ի**

Սրտի զոհունակութեամբ կրնանք յայտարարել որ, անցնող 1971 տարին արդիւնաշատ տարի մը եղաւ մեր Յուսիսն համար: Մեր ձեռք բերած յաջողութեանց համար զոհունակութիւն եւ փառք տալու ենք Աստուծոյ: Բաց աստի գնահատելի են ծառայութիւնները մեր Եկեղեցւոյ կազմակերպութեանց, եւ զոհողութիւնները բոլոր աշխատողներուն որոնք շանքերուն միջոցաւ յաջող տարի մը բոլորեցինք:

1 - ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ - Եկեղեցւոյ մը բարոյական եւ նիւթական կացութիւնը կարգ մը պայմաններէ կախում ունի, որուն ամէնէն կարեւոր պայմանն է Իր կազմակերպութեանց բարոյական վիճակը:

Ս. Եկեղեցւոյս կազմակերպութեանց գլխաւորներն են Մխական Խորհուրդն ու Եկեղեցասիրաց Տիկնանց Միութիւնը, որոնք ժրջան աշխատանք թափեցին իրենց Ա. Պետին, Տիար Ա. Գրիգորեանի եւ Ատենապետուհիներուն, Տիկ. Լ. Նազարեանի եւ Տիկ. Մարի Փրօքինգի առաջնորդութեամբ:

2 - ԴՊՐԱՑ ԴԱՍ ԵՎ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ. - Տիարք Եղ. Սուրեան, իբր դպրապետ, Պրն. Գ. Գասպարեան եւ Տրթ. Գրմբմեան մեր Կիրակնօրեայ դպրոցի պատասխանատուները մեր Կիրակնօրեան պահեցին իր լաւագոյն դերին մէջ: Ներկայ եղած ենք իրենց բոլոր ժողովներուն եւ տեղեակ մնացած իրենց գործունէութեան: Ուսուցչական կազմի համար ամսական ասուլիսի ժամ մը հաստատուած է, որու ընթացքին խօսած ենք իրենց:

3 - Լ. Ե. Ե. Կ. Մեր երիտասարդները ուրախալի է որ այս տարի շատ աւելի հետաքրքրութիւն եւ գործունէութիւն ցոյց կուտան: Թիւով սահմանափակ է մեր Յուսիս երիտասարդութեան թիւը. եղածները անչափահաս էին, բայց հետզհետէ հասուննալ ըսկսած են այդ պատճառաւ դարձած են աւելի հասկցող: Տիարք Մինաս Գազանճեան, եւ Տր. Էտ. Օնանեան կզբաղին անոնց հետ մեր առաջնորդութեան տակ:

4 - ԽՈՐՀՐԴԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՔ ԵՎ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ - 1971- տարւոյ ընթացքին ունեցած ենք 6 ՄԿՐՏՈՒԹԻՒՆ: 4 ՊՍԱԿ: Եւ 3 Թաղումներ:

Ամէն կիրակի, բացի բնաւոր բացակայութեանց պատճառաւ, ինչպիսիք են, Պատգամաւորական ժողովի, եւ արձակուրդի առիթներ, ամէն կիրակի Ս. Պատարագ մատուցուած է եւ բնին կեանք բարոգութիւնը մատակարարուած: Զորս կիրակիներ, հետեւեալ Հոգեւոր Հովիւներուն հետ փոխանակութիւն ունեցած ենք. Հոգ. Տ. Զաւէն Մ. Վրդ. Տ. Մեսրոպ Մ. Վրդ. եւ քահանայ հարք Տ. Արսէ եւ Տ. Լեւոն:

5 - ՀՈՎՈՒԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ - Անոնք կատարուած են կանոնաւորաբար: Մասնաւոր հոգածութեանց արժանացած են հիւանդաց եւ սգաւորաց այցելութիւնները: Բացի Յուսիս անդամներու կանոնաւորաբար այցելութիւններէն, այցելած ենք նաեւ ոչ-անդամ, եւ կամ այլ Հայ եկեղեցիի անդամներուն, անհրաժեշտ առիթներով:

Եկեղեցին վճակաւ քարտուղար մը պահելու ի վիճակի չէ առ այժմ: Տօքթ. Ս. Եսէճեան եւ Տիկ. Լ. Սողոյեան գնահատելի ծառայութիւն կը մատուցանեն այդ մասին:

Հոս զանց կառնեմ յիշել այն գործունէութիւնները որ Միական Խորհուրդի տեղեկագրին մէջ յիշուած են: Վերոյիշեալ եկեղեցապատկան Կազմակերպութեանց գրեթէ բոլոր ժողովներուն ներկայ գտնուելով պէտք եղած առաջնորդութիւնը տուած եմ: Փակագծի մէջ Հոս յիշել պարտիմ մեր Հայ Դպրոցը, որ համայնքիս Հ. Բ. Ը. Միութեան անդամներէ կազմուած, խնամատարութեան ներքեւ 2 դասարան - ներով շաբաթական երկու ժամ մանուկներու եւ ժամ մըն ալ չափահասներու համար տեղի ունեցաւ Տիկնայք Արուսեակ Գըմգըմեանի, Հիլտա Ուիտըրսբուրնի եւ Պրն. Սահակ Տէտէեանի ուսուցչութեամբ:

Կանոնաւորաբար հրատարակուեցաւ Ծուխիս ԾնՈՐՀԱԼԻ թերթիկը. ջանքերովն Տիկ. Եսլեր Գրիգորեանի եւ օժանդակութեամբը Տէր եւ Տիկ. Սարգիս եւ Մարճի Սաթեաններու նաեւ Պրն. Աշոտ Գրիգորեանի: Խմբագրական մարմին մը կազմելու որոշումը տրուած է Միական Խորհուրդի կողմէ:

Ս. Սեղանի նպաստակութեան համար, բացի մարզուած մոմակալ 4 զոյգ տղոցմէ, Տիար Գասպար Գասպարեան վարժեցուց Դաւիթ Անտոնեանը բուրվարակրութեան:

Հովուական պաշտօնի կարեւոր երեսներէն մին է Ընկերային Յարաբերութեանց մշակումը: ԱՄՆ-ի մայրաքաղաքում ապրելով, մենք ունեցած ենք տեսակաւոր այցելութեանց առիթներ, նախ մեր Ծուխի անդամներուն, երկրորդ օտարներու, երրորդ, դուրսէն այցելողներու: Մեր ազգայիններէն անոնք որոնք Ուաշինկթըն այցելած են, մեծաւ մասամբ եկեղեցի եկած են, երբեմն կարեւոր նուիրատուութիւններ կատարելով: Մեր Մի. Խորհուրդի անդամներու եւ բոլորիս պարտականութիւնն է շերմ ընդունելութիւն ցոյց տալ մեր այդ եղբարց եւ քոյրերուն:

Հետզ հետէ կընդարձակուին մեր յարաբերութիւնները պաշտօնական շրջանակներու, եկեղեցիներու ներկայացուցիչներու եւ կարեւոր անձնաւորութեանց հետ: Յունիս 20-ին (1971) ԱՄՆ-ի Խորհրդարանը, եւ Սեպտ. 30-ին Մերակոյտը բացինք աղօթքով, որուն արձագանք եղաւ Հայ մամուլը: Տասնեակ մը պաշտօնական առիթներով ներկայացուցիչք Հայ եկեղեցին, զայն ծանօթացնելով Օտար շրջանակներու: Օրինակի համար, Ապրիլ 24-ի առիթով Նեշընըլ Գըթիտըլի մէջ Պատարագելով ու քարոզելով մասնակցելով Պիշըբէտ Ուօքըրի ձեռնադրութեան եւ այլըն: Այս գործերու համար մեր Յանձնախումբի անդամներն են Գնդ. ձ. ձըսգալեան Ա. Պետ. Տիարք Գ. Գասպարեան Ա. Դպիր. Ա. Պօտուրեան Գանձապահ, Իսկ Տօքթ. Սըբուհի Էսէճեան հրաւիրուեցաւ իբր Խորհրդական Տօքթ. Արա Աւագեանի տեղ:

Այսօր, Հոս, այս ժողովին իւրաքանչիւրդ պատեհութիւնը ունիք ընելու թե լազրութիւններ, որպէսզի տանինք թեմկն. Պատգամաւորական ժողովին, եւ Միական Խորհուրդներու Ծրջանային ժողովին:

Այն համայնքը որ այսօր ինքզինք կը պատրաստէ վաղուան համար, կրնայ վստահ ըլլալ որ տեւական պիտի ըլլայ իր գործունէութիւնն ու կեանքը: Զեզմէ շատեր վստահ եմ, կը յիշեն որ երեք տարիներ առաջ թելադրած էի որ այժմէն հող մը գնենք, պատրաստ ըլլալու համար ոեւէ հաւանականութեան դէմ:

Անցեալ Կիրակի, Յունուար 23-ին մասնաւոր Միական ժողով մը գումարեցինք եւ լսեցինք ՀՈՂԻ ԳՆՄԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ տեղեկագիրը. անդամներ Տիարք Գ. Գասպարեան, ձան Գաւուքեան, ձէք Գազանճեան: Կը յուսանք որ յաջողի մեր ծրագիրը, քանի որ իբրեւ Մայրաքաղաքի Հայ Համայնք ունինք շատ մը պատեհութիւններ, ինչպէս նաեւ պարտականութիւններ: Կրնանք ունենալ ՀԱՅ ԿԵԴՐՈՆ մը օժտուած ամէն կարելիութիւններով. առօրեայ Դպրոց, Մարզական, Թատերական, Գրական, Մշակութային յատուկ կազմակերպութիւններով: Միայն թէ տեսիլք ունենանք եւ մերն է յաջողութիւնը:

Ողջունելով բոլորդ սիրով ու հայցելով Աստուծոյ Օրհնութիւնը ձեր բոլորին վրայ.  
Բարգէն Եպիսկոպոս Վարժապետեան

Յունուար 30  
1972.